6.	ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PEDAGOGY AND PSYCHOLOGY ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՆՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

ՀՏԴ 159.95
DOI: 10.56246/18294480-2023.15-39

ՎԱՀԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՃԿՊԱ, ճգնաժամային կառավարման ամբիոնի դասախոս
էլփոստ՝ a.v.vahanyan@gmail.com
ՔՈՒՐՔՉՅԱՆ ԼՈՒՍԻԿ
ԳՊՀ դասախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
հոգեբանության դոցենտ
էլփոստ՝ lqurqchyan@mail.ru

Սեփական և ուրիշների հույզերը ճանաչելու և կառավարելու ունակությունը, էմպատիայի դրսևորումը ներառված են մարդկային հուզական ինտելեկտի հայեցակարգի բաղադրիչների շարքում: Դրանց դրսևորումը համարվում է ուսուցչի մանկավարժական գործունեության հաջողության բանալին: Հոդվածում ներկայացված է մի հետազոտություն, որն իրականացվել է ուսուցիչների շրջանում: Որպես հուզական ինտելեկտի հայտորոշիչ միջոց՝ կիրառվել է Ն. Հոլի «էմոցիոնալ ինտելեկտի» գնահատման մեթոդը (EQ հարցաշար):

Հետազոտության արդյունքում հուզական ինտելեկտի ընդհանուր ցուցանիշի միջին մակարդակ է արձանագրվել և՛ մինչև 10 տարվա մասնագիտական ստաժ ունեցող (95%), և՛ 10 և ավելի մասնագիտական ստաժ ունեցող ուսուցիչների շրջանում (90%): Վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են հաստատվել տարբեր տարիքային խմբերի էմպատիայի բարձր և ցածր մակարդակներում. ավելի բարձր ստաժով ուսուցիչների մոտ այն ավելի ցածր է (8%), քան երիտասարդների մոտ (18%), սակայն միջին մակարդակում դրանք էականորեն չեն տարբերվում (74-75%):

Հետազոտության արդյունքներով պայմանավորված՝ առաջարկում ենք 10 և ավելի բարձր ստաժ ունեցող ուսուցիչների շրջանում հոգեբանական աջակցության աշխատանքներում ներառել էմպատիայի կայուն դրսևորումներին ուղղված

աջակցությունը, որը կարող է էականորեն նպաստել մանկավարժական գործունեության և հաղորդակցման որակի բարելավմանը:

Բանալի բառեր՝ *հուզական ինտելեկտ, զգացմունքների կարգավորում, մանկավարժական գործունեություն, ուսումնական գործունեության սուբյեկտ, ուսուցչի անձ:*

Հետազոտության արդիականությունը: 1990-ականների սկզբին հայտնվեցին առաջին գիտական հոդվածները հուզական ինտելեկտի՝ որպես հոգեբանության նոր երևույթի վերաբերյալ: Այս թեման դարձել է շատ սիրված և գրավել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը: Այս թեմայի ժողովրդականության պատճառներն են անձի՝ ուրիշների հետ հուզական փոխգործակցության միջոցով հարմարվելու ունակությունը ավելի ամբողջական գնահատելու, ինչպես նաև սոցիալական գործունեության տարբեր ոլորտներում անձի վարքի հաջողությունը կանխատեսելու ունակությունը՝ այս թեմայի ժողովրդականության պատճառներն են:

20-րդ դարից սկսած՝ հոգեբանությունը փնտրում էր մարդու հոգեկանի այնպիսի ունակություն, որը կապված կլիներ սոցիալական և հուզական ոլորտների հետ: Ս. Լ. Ռուբենշտեյնը պնդում էր, որ մտածողությունը բանականի և հուզականի միասնությունն է: Նախ առաջացավ «սոցիալական ինտելեկտ» հասկացությունը, ապա Գիլֆորդի, Հ. Գարդների և Գ. Այզենկի կողմից սոցիալական ոլորտում ինտելեկտ խնդիրների զարգացման համատեքստում հայտնվեց հուզական բանականությունը: Երբ հույզերը դիտվում են որպես գիտելիքի հատուկ տեսակ, ծագում է *«հուզական ինտելեկտ EQ» սահմանումը:* Կարող ենք համաձայնել Դ.Վ. Ուշակովի այն պնդման հետ, որ հուզական ինտելեկտը սերտ կապ ունի սոցիալական ինտելեկտ հետ, բայց այնուամենայնիվ ունի իր առանձնահատկությունները[1] [1, էջ 15]:

Ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ ի հայտ եկած նոր պայմանները պահանջում են արդյունավետ մանկավարժական աշխատանքի անձնական պատրաստակամության տարբեր կողմերի ուսումնասիրություն և, իհարկե, գործունեության ներկա պայմաններում մասնագետի հոգեբանական աջակցության իրական հնարավորություններ: Ուսուցչի կերպարում են համատեղվում ուսումնական գործընթացի՝ որպես սոցիալական արժեքների և գիտելիքների յուրօրինակ համակարգողի և անհատի և հասարակա-

[1]. Ушаков Д. В., Социальный и эмоциональный интеллект: надежды, сомнения, перспективы / Д. В. Ушаков // Социальный и эмоциональный интеллект: от процессов к измерениям, под ред. Д. В. Люсина, Д. В. Ушакова, М., Изд-во Ин-т психологии РАН, 2009. с. 11 – 30.

կան սուբյեկտի դերերը: Ուսուցիչը՝ որպես ուսումնական գործունեության սուբյեկտ, հանդես է գալիս որպես սերունդների հանդիպման համակարգող, կազմակերպիչ և անմիջական մասնակից: Լինելով որոշակի անձնային բնութագրիչների կրող, կրթության արժեքներն արդիականացնող և ապագա նպատակների վերափոխող, որը ենթադրում է ազատ և գիտակցված ինքնորոշում, պատասխանատվության ստանձնում՝ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության արդյունքների համար, ուսուցիչը դառնում է կարևոր հասարակական սուբյեկտ:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ուսուցչի անհատականության ձևավորումը և զարգացումը ժամանակակից կրթական պայմանների համատեքստում, որի փուլերն ու առանձնահատկությունները կարող են լուրջ ազդեցություն ունենալ ինչպես կրթական գործունեության արդյունավետության, այպես էլ ուսուցչի հոգեբանական առողջության պահպանման ցուցանիշների վրա:

Ուսուցիչների մասնագիտական գործունեության մեջ հուզական ինտելեկտի՝ ոպես կարևոր սոցիալական և հաղորդակցական կոմպետենտային նկարագրի ուսումնասիրություններով հրապարակումներ են ներկայացրել, Տ. Ի. Սոլոդկովան, Մ. Վ. Պոգոդաևան, Ս. Ե. Ռայվերսը, Ն. Վանգը և այլք[2]:

Հուզական ինտելեկտի՝ որպես ուսուցչի անձի կառուցվածքային բաղադրիչի մակարդակի հայտորոշումը թույլ է տալիս գնահատել մանկավարժական գործունեության արդյունավետ կազմակերպման հնարավորությունները, ինչպես նաև ուսուցչի մասնագիտական այրման պոտենցիալ ռիսկերը:

Այս հիմնախնդրով պայմանավորված՝ մենք իրականացրել ենք հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել տարբեր մասնագիտական ստաժ ունեցող ուսուցիչների մոտ էմպաթիայի և հուզական ինտելեկտի՝ որ-

---

[2]. Солодкова Т.И., Эмоциональный интеллект как личностный ресурс преодоления синдрома выгорания и его развитие у педагогов, автореферат дис. ... кандидата психологических наук, Иркутск, 2010, 160 с.

Погодаева М.В., Анализ уровня эмоциональной компетентности педагогов, Научно-педагогическое обозрение, 2022, Вып. 1 (41), с. 155-161 Pedagogical Review. 2022, vol. 1 (41), pp. 155-161

Rivers, S. E. Improving the social and emotional climate of classrooms: A clustered randomized controlled trial testing the RULER approach / S. E. Rivers, M. A. Brackett, M. R. Reyes, N. A. Elbertson, P. Salovey // Prevention Science. 2013, No. 14 (1), pp. 77-87. – DOI: 10.1007/s11121-012-0305-2.

Wang, N. Assessing students' emotional competence in higher education: Development and validation of the widener emotional learning scale / N. Wang, T. Young, S. C. Wilhite, G. Marczyk // Journal of Psychoeducational Assessment, 2011, № 29 (1). pp. 47-62.

պես անձնային-մասնագիտական կարևոր որակների դրսևորման մակարդակները:

Փորձարարական մասն անցկացվել է Երևանի «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ավագ դպրոցում և քոլեջում՝ մանկավարժական կոլեկտիվի անձնակազմի հետ: Հետազոտությանը մասնակցել են թվով 45 ուսուցիչ, որից 22-ը 10 և ավելի տարիների մանկավարժական ստաժ ունեցողներն են, իսկ 23-ը՝ 10 տարուց պակաս մանկավարժական ստաժ ունեցողները:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են *հանդիսացել* անհատականության՝ որպես միանգամայն հատուկ հոգեբանական երևույթի *համակարգային և ամբողջական մոտեցումները*, որոնք տարբեր կերպով են արտահայտվում տարբեր մասնագիտությունների համար: Ինչպես նաև դիտարկել ենք անձնավորության, որպես ֆունկցիոնալ օրգանիզի ամբողջականության մոտեցումը:

Հուզական ինտելեկտի՝ որպես գիտական երևույթի լայն տարածումը սկսվեց Դ. Գոլեմանի «Հուզական ինտելեկտ» գրքի հրատարակումից[3] [էջ 383]: Ըստ Ջ. Մայերի՝ ժամանակակից հոգեբանության մեջ EI–ի ուսումնասիրության երկու մոտեցում է առկա՝ պոպուլյար, որը հաջողակ կյանքի երաշխավորն է, և գիտական: Հեղինակները տարբեր ձևերով սահմանել են հուզական ինտելեկտի նպատակը, այն է՝ սեփական զգացմունքների և ցանկությունների հետ գործելու ունակություն (Ռ. Բասկ, 1991թ., Է. Յակովլևա, 1997թ.), հույզերով վերարտադրված անհատական փոխհարաբերությունները հասկանալու և հուզական ոլորտը վերահսկելու ունակություն՝ հիմնված մտավոր վերլուծության և սինթեզի վրա (Պ. Սալովեյ, Ջ. Մայեր, 1994թ., Գ. Գ. Գորսկովա, 1999թ.), հուզական, անձնական և սոցիալական կարողությունների ամբողջություն, որոնք ազդում են անձի՝ շրջապատի պահանջների և ճնշումների արդյունավետ հաղթահարման ընդհանուր ունակության վրա (Ռ. Բար-Օն, 2000):

Համարվում է, որ EI–ի զարգացման բարձր մակարդակ ունեցող անձինք ունակ են հասկանալու իրենց և իրենց շրջապատի մարդկանց հույզերը, այդպիսի մարդիկ ունակ են կառավարել իրենց հուզական վիճակը, անհատին օգնում է արդյունավետորեն համագործակցել ուրիշների հետ և դրանով ապահովում է արդյունավետ հարմարում կյանքի նոր պայմաններին:

---

[3] Goleman, D. Working with emotional intelligence / D. Goleman. – N.Y.: Bantam Books, 1998. – 383 p.

Այսպիսով, հուզական ինտելեկտի նախնական մոդելի տեսական հիմնավորումները առաջարկվել են 1990 թվականին Դժ. Մայերը և Պ. Սալովեյի կողմից[4]: Այնուհետև մոդելը զտվել և ներկայացվել է Դ. Կարուսոյի համահեղինակությամբ[5]: Մոդելի նախնական տարբերակը մի տեսակ կառուցվածք էր, որը բաղկացած էր մի քանի ունակություններից.

1) հույզերի նույնացում և արտահայտում,

2) հուզական վիճակի վերաբերյալ տեղեկատվության օգտագործում մտածողության և գործունեության մեջ,

3) հույզերի կարգավորում:

Տեսության կատարելագործման ընթացքում ավելացվել է ևս մեկ ունակություն.

4) զգացմունքների ընկալում (ըմբռնում):

Գոլեմանի հուզական ինտելեկտ մոդելը[6]:

20-րդ դարի վերջին հուզական բանականության ֆենոմենի վերաբերյալ այլ տեսություններ հայտնվեցին: Հայտնի տեսություններից մեկը Դանիել Գոլեմանի մոդելն է, որը բաղկացած է հետևյալ նկարագրերից:

1. Ինքնագիտակցում.

- հուզական (հույզերի ինքնավերլուծություն և ինքն իր վրա ունեցած ազդեցության գիտակցում. որոշում կայացնելիս ապավինել ինտուիցիային),
- ճշգրիտ ինքնագնահատում (սեփական ուժերի և մեկի հուզական ռեսուրսների առկա շեմը),
- ինքնավստահություն (սեփական տաղանդը համարժեք գնահատելու ունակություն. անհատի ինքնահարգանք):

2. Ինքնատիրապետում.

- զսպել զգացմունքները (կործանարար հույզերի և ազդակների կառավարում),
- բացություն (անկեղծություն և անմիջականություն ցույց տալ, հուսալիություն), հաղթելու կամք (անհատը համառորեն ձգտում է բարելավել իր աշխատունակությունը՝ ներքին որակի չափանիշներին համապատասխանելու համար),

---

[4] Mayer, J. D., The intelligence of emotional intelligence / J.D. Mayer, P. Salovey // Intelligence. N.Y. – 1993. – P. 433 – 442.

[5] Mayer, J. D. Mayer – Salovey – Caruso Emotional Intelligence Test (MSCEIT). User's Manual / J.D. Mayer, P. Salovey, D. Caruso. – Toronto: MultiHealth Systems, 2002. – 110 p.

[6] Goleman, D. Working with emotional intelligence / D. Goleman. – N.Y.: Bantam Books, 1998. – 383 p.

• նախաձեռնություն (ակտիվ գործելու ցանկություն՝ չկորցնելով լավ հնարավորությունները),

• լավատեսություն (շրջապատում տեղի ունեցող իրադարձություններին ուրախ նայելու և արձագանքելու կարողություն):

3. Սոցիալական զգայունություն.

• կարեկցանք (հաշվի առնել այլ մարդկանց զգացմունքները, հաշվի առնել նրանց դիրքը, համակրանքով վերաբերվել այլոց խնդիրներին),

• բիզնեսի իրազեկություն (ստանձնել պատասխանատվություն, հասկանալ դրա էությունը, իրադարձությունները),

• ուշիմություն (հասկանալ և փորձել բավարարել այլոց՝ ենթակաների կամ հաճախորդների կարիքները):

4. **Հարաբերությունների կառավարում.**

• ոգեշնչում (առաջնորդ լինելու ունակություն),

• ազդեցություն (ունենալ համոզելու մարտավարություն),

• նպաստել ինքնակատարելագործմանը (հետադարձ կապի և օգնության միջոցով խրախուսել այլ մարդկանց կարողությունների զարգացումը),

• նպաստել փոփոխություններին (փոխակերպման փորձեր անել, փոխել կառավարման մեթոդները),

• լուծել կոնֆլիկտային իրավիճակները,

• ամրապնդել անձնական հարաբերությունները (սոցիալական կապերը պահպանելու, ինչպես նաև դրանք զարգացնելու ունակություն),

• թիմում աշխատելու, համագործակցելու ունակություն (ստեղծել թիմ, ընդհանուր նպատակի համար շփվել ուրիշների հետ):

Ըստ Ռ. Բան-Օնի՝ «հուզական ինտելեկտը» բաղկացած է հինգ բաղադրիչներից, որոնք, իրենց հերթին, բաժանված են ենթաբաղադրիչների.

1) ինքնաճանաչում. տեղյակ լինել սեփականհույզերից, ունենալ ինքնավստահություն, ինքնահարգանք, ինքնուրույնություն, ինքնակառավարում իրականացում;

2) հմտություններ միջանձնային հաղորդակցության մեջ. կարեկցանք, հարաբերությունների միջանձնային ասպեկտ, սոցիալական պատասխանատվություն կրելու ունակություն;

3) հարմարվելու ունակություն. ունենալ մտքի ճկունություն, ունակություն խնդիրներ լուծել, չկորցնել կապը իրական աշխարհի հետ;

4) սթրեսային իրավիճակների կառավարում. սթրեսի ժամանակ կայունության պահպանում, իմպուլսիվ հույզերի վերահսկում.

5) գերիշխող տրամադրություն. կենսախնդություն, լավատեսություն[7] [էջ 19]:

Մեր հետազոտության համար հիմք ենք ընդունել *հուզական ինտելեկտի՝ որպես հուզական և ճանաչողական ունակությունների համակարգի սահմանումը, որն ազդում է անձի սոցիալ-հոգեբանական հարմարվողականության վրա:* Կառուցվածքային բաղադրիչները, որոնք ընդգրկված են EQ-ի բովանդակության մեջ, փոխկապակցված են միմյանց հետ, դրանց կապը ազդում է արդյունավետ միջանձնային փոխազդեցության վրա: Անհատները, որոնք ունեն բարձր մակարդակի հուզական ինտելեկտի զարգացում, ունեն հստակ ունակություններ՝ հասկանալու և վերահսկելու իրենց և այլ մարդկանց հույզերը: Նման մարդիկ հաջողությամբ հարմարվում են նոր միջավայրում, նրանք ավելի արդյունավետ են միջանձնային հաղորդակցման, հուզական ոլորտը կառավարելու գործում և հասնում են իրենց նպատակներին՝ շփվելով ուրիշների հետ:

Հետազոտության մեթոդիկան: Հուզական ինտելեկտի հայտորոշում՝ ըստ Ն. Հոլլի[8]: Հարցարանի միջոցով մենք բացահայտել ենք ընտրանք խմբի հուզական գիտակցության, հույզերի կառավարման, ինքնամոտիվացման, էմպատիայի (ապրումակցման) և այլոց հույզերի կառավարման մակարդակները: Հոդվածում ներկայացված է միայն ընդհանուր հուզական ինտելեկտի և էմպատիայի վերաբերյալ արդյունքների վերլուծությունը Exsel ծրագրային փաթեթի միջոցով:

<u>Արդյունքների վերլուծություն</u>

Գծապատկեր 1.-ում ներկայացված են հուզական ինտելեկտի ընդհանուր ցուցանիշները:

•Հուզական ինտելեկտի ընդհանուր ցուցանիշը միջին մակարդակի է մինչև 10 տարվա մասնագիտական ստաժ ունեցող 95% ուսուցիչների շրջանում:

---

[7] Bar-On, R. Emotional and social intelligence: Insights from the Emotional Quotient Inventory / R. Bar-On, J. Parker // Handbook of emotional intelligence. – San Francisco: Jossey-Bass, 2000. – P. 363 – 388.

[8]. Հարցարանի ամենավաղ տպագիր աղբյուրը «Е. П. Ильин. Эмоции и чувства. СПб.: Питер, 2011». գիրքն է, որտեղ այն ներկայացված է տարօրինակ միավորով (-3,3), առանց որևէ նորմերի և «թեստը հստակեցման կարիք ունի» նշումով:

«Н. П. Фетискин и др. Социально-психологическая диагностика развития личности и малых групп. М.: ИИП, 2009» գրքում թեստը համալրվել է չհիմնավորված այլ նորմերով, որոնք համաձայնեցված չեն միավորների հետ: Մենք ընտրել ենք այն թեստը, որը շրջանառվում է համացանցում և այլ ձեռնարկներում:

•10 և ավել մասնագիտական ստաժ ունեցող ուսուցիչների 90%-ի շրջանում է նկատվում հուզական ինտելեկտի միջին մակարդակ:

Գծապատկեր 1. Հուզական ինտելեկտի ընդհանուր ցուցանիշները:



Գծապատկեր 2. Էմպատիայի ցուցանիշները:



Գծապատկեր 2-ից երևում է, որ հուզական ինտելեկտի կառուցվածքում էմպաթիայի մակարդակի հայտորոշման դեպքում.

- Մինչև 10 տարվա մասնագիտական ստաժ ունեցող 74% ուսուցիչների շրջանում առկա է էմպաթիայի միջին մակարդակ:
- 10 և ավել մասնագիտական ստաժ ունեցող 77% ուսուցիչների շրջանում նույնպես դրսևորվում է էմպաթիայի միջին մակարդակ:
- Կարևոր ենք համարում նշել նաև, որ այս խմբի հետազոտվողների շրջանում էմպաթիայի ցածր մակարդակը կազմում է 18%, իսկ բարձր մակարդակը 5%:
- Մինչև 10 տարվա մասնագիտական ստաժ ունեցող ուսուցիչների շրջանում միայն 8% ունի էմպաթիայի ցածր մակարդակ, իսկ բարձր մակարդակը կազմում է 18%:

Հատկապես կարևորվում են էմպաթիայի ընդհանուր ցուցանիշների և հուզական ինտելեկտի կառուցվածքում առկա էմպաթիայի ցուցանիշների հարաբերակցումը: Հուզական ինտելեկտի կառուցվածքում էմպաթիայի տիրապետող մակարդակը միջին է, իսկ ընդհանուր հայտորոշման արդյունքում՝ միջին՝ նվազման միտումով: Հատկանշական է, որ մասնագիտական ստաժի ավելացման պայմաններում էմպաթիայի մակարդակը հուզական ինտելեկտի կառուցվածքում ցածր է, իսկ երիտասարդ մասնագետների միջավայրում՝ բարձր, ինչը կարող է խոսել հուզական ինտելեկտի կառուցվածքային բաղադրիչների հետ ունեցած կապերի առանձնահատկությունների մասին: Դա թույլ է տալիս եզրակացնելու, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների արդյունքում մասնագիտական կարևորագույն որակներից մեկը՝ էմպաթիան, կարող է ենթարկվել մասնագիտական ամորտիզացիայի և հյուծման, ինչն էլ կարող է նպաստել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների մեջ բացասական հուզական կապերի ձևավորմանը:

Գաղտնիք չէ, որ ուսուցիչը բոլոր ժամանակներում եղել է և կա հասարակության մեջ բարոյահոգեբանական մթնոլորտն արտացոլող և միևնույն ժամանակ այն ձևավորող մասնագետներից առաջատարը: Ուսուցչի մասնագիտական երկարակեցությունը և հոգեբանական առողջությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ ենք համարում դպրոցում հոգեբանական աջակցության տրամադրումը ոչ միայն սովորողներին, այլև կրթական գործընթացը կազմակերպող և իրականացնող անձնակազմին՝ վեր հանելով և գնահատելով վերջիններիս մասնագիտական կարիքներն ըստ մասնագիտական ստաժի և ոլորտների առանձնահատկությունների:

Հետազոտության արդյունքներով պայմանավորված՝ առաջարկում ենք 10 և ավելի բարձր ստաժ ունեցող ուսուցիչների շրջանում հոգեբանական աջակցության աշխատանքներում ներառել էմպատիայի կայուն դրսևորումներին ուղղված աջակցությունը, որը կարող է էականորեն նպաստել մանկավարժական գործունեության և հաղորդակցման որակի բարելավմանը: Ուսուցիչների մոտ էմպատիայի մակարդակի կայունությունը ապահովող հոգեբանական մոտեցումներն ու մեթոդները, կարող են նպաստել նրանց հուզական կայունության ապահովմանն ու մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ильин Е. П., Эмоции и чувства, СПб, Питер, 2011.
2. Погодаева М. В., Анализ уровня эмоциональной компетентности педагогов, Научно-педагогическое обозрение, 2022, Вып. 1 (41), с. 155–161 Pedagogical Review. 2022, vol. 1 (41), pp. 155–161
3. Солодкова Т. И., Эмоциональный интеллект как личностный ресурс преодоления синдрома выгорания и его развитие у педагогов, автореферат дис. … кандидата психологических наук, Иркутск, 2010, 160 с.
4. Ушаков Д. В., Социальный и эмоциональный интеллект: надежды, сомнения, перспективы / Д.В. Ушаков // Социальный и эмоциональный интеллект: от процессов к измерениям, под ред. Д.В. Люсина, Д.В. Ушакова, М., Изд-во Ин-т психологии РАН, 2009, с. 11 – 30.
5. Фетискин Н. П., и др. Социально-психологическая диагностика развития личности и малых групп М., ИИП, 2009.
6. Bar-On, R. Emotional and social intelligence: Insights from the Emotional Quotient Inventory / R. Bar-On, J. Parker // Handbook of emotional intelligence, San Francisco: Jossey-Bass, 2000, pp. 363 – 388.
7. Goleman, D. Working with emotional intelligence / D. Goleman. N.Y.: Bantam Books, 1998. – 383 p.
8. Mayer, J. D. The intelligence of emotional intelligence / J.D. Mayer, P. Salovey // Intelligence. N.Y.,1993, pp. 433 – 442.
9. Mayer, J. D. Mayer – Salovey – Caruso Emotional Intelligence Test (MSCEIT). User's Manual / J.D. Mayer, P. Salovey, D. Caruso, Toronto: MultiHealth Systems, 2002. – 110 p.
10. Rivers, S. E. Improving the social and emotional climate of classrooms: A clustered randomized controlled trial testing the RULER approach / S. E. Rivers, M. A. Brackett, M. R. Reyes, N. A. Elbertson, P. Salovey // Prevention Science, 2013, No. 14 (1), pp. 77-87, DOI: 10.1007/s11121-012- 0305-2.
11. Wang, N. Assessing students' emotional competence in higher education: Development and validation of the widener emotional learning scale / N. Wang, T.

Young, S. C. Wilhite, G. Marczyk // Journal of Psychoeducational Assessment, 2011, № 29 (1), pp. 47-62.

EMOTIONAL INTELLIGENCE AS A STRUCTURAL COMPONENT FOR THE PERSONALITY OF A PEDAGOGUE

VAHANYAN ARMINE
Lecturer at the Chair of Crisis Management,
State Academy Crisis Management
e-mail: a.v.vahanyan@gmail.com
KURKCHYAN LUSIK
PhD in Pedagogical Sciences,
Associate Professor, GSU Lecturer
e-mail: lqurqchyan@mail.ru

The ability to recognize one's own and other people's emotions and manage them, the manifestation of empathy are among the components of the concept of human emotional intelligence, and their manifestation is considering the key in the success of a teacher's pedagogical activities. The article presents a study conducted among teachers.The methodology of N. Hall for assessing "emotional intelligence" (EQ questionnaire) was used as a means of determining emotional intelligence.

As a result of the study, the overall indicator of emotional intelligence was recorded at an average level both for teachers with up to 10 years of work experience (95%) and those with 10 or more years of work experience (90%). Statistically significant differences were found in high and low levels of empathy in different age groups: teachers with more experience have it lower (8%) than young teachers (18%), but do not differ significantly at the average level (74-75%).

According to the results of the study, we propose to include support aimed at sustainable manifestations of empathy in the activities of psychological support for teachers with 10 or more years of work experience, which can significantly contribute to the improvement of pedagogical activity and the quality of communication.

Keywords: *Emotional intelligence, regulation of emotions, pedagogical activity, subject of educational activity, teacher's personality.*

ЭМОЦИОНАЛЬНЫЙ ИНТЕЛЛЕКТ КАК СТРУКТУРНЫЙ КОМПОНЕНТ ЛИЧНОСТИ ПРЕПОДАВАТЕЛЯ

ВАГАНЯН АРМИНЕ
Преподаватель кафедры антикризисного управления ГААУ
электронная почта: a.v.vahanyan@gmail.com
КУРКЧЯН ЛУСИК
Кандидат педагогических наук, доцент
Преподаватель ГГУ
электронная почта: lqurqchyan@mail.ru

Умение распознавать свои и чужие эмоции и управлять ими, проявление эмпатии входят в число составляющих понятия эмоциональный интеллект человека, а их проявление считается залогом успеха педагогической деятельности педагога.В статье представлено исследование, проведённое среди учителей. Методика Н. Холла оценки эмоционального интеллекта (опросник EQ) был использован в качестве маркера эмоционального интеллекта:

В результате исследования общий показатель эмоционального интеллекта был зафиксирован на среднем уровне как у учителей со стажем работы до 10 лет (95%), так и у учителей со стажем работы 10 и более лет (90%). Установлены статистически значимые различия в высоком и низком уровне эмпатии разных возрастных групп: у учителей с более высоким стажем она ниже (8%), чем у молодежи (18%), но на среднем уровне существенно не различаются (74-75%).

По результатам исследования мы предлагаем включить в деятельность по психологической поддержке педагогов со стажем работы 10 и более лет поддержку, направленную на устойчивые проявления эмпатии, что может существенно способствовать совершенствованию педагогической деятельности и общения.

Ключевые слова: *эмоциональный интеллект, регуляция эмоций, педагогическая деятельность, субъект учебной деятельности, личность педагога.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.04.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 10.05.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: